



31. ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐՍԵՐ

Կեղի մեկ անկուշտ մարթըմ, էնոր կնիկ ու էրկու տըղա էլ կունենա:

Ես մարթն էլ շատ հարուստ կեղի, էնոր աչկ չըկըշտանար դիւնեի մալից:

Ետոր տըղեկներ կը ճամխա օտար երկիր գոռծի:

ճիշ տըղեն կերքա երկիրը աշխատելու: Կը տեսնա, օր մեկ սարի՞մ հառեն ճիշ քարեր կենին գյիլ՝ կը գան սարի գյըլսուց տակ, պստիկ քարեր՝ սարի տըկանց կը տան հել վեր, կերքան սարի գյըլիխ:

Տըղեն կը գարմանա ըն տեղ, թե եսա քարեր ընչի՝ եսպս եղան, կը մըտածա ու իր ճամքախ կը պընի, կերքա:

Կերքա մեկ հիւրիշ տեղըմ, կը տեսի՝ չորս պըղինձ ըուեզով տըրած վըր անգըռորներուն: Կը տեսի, օր գյըլսու պըղընձի ու հիստին պըղընձի տակ կը վառվի, ճիւր ըն պըղընձեն կեռա, կը թալա ըն պըղինձ, պըղընձեն կեռա, կը թալա ըն պըղինձ: Միծու պըղընձերն էլ կրակ է չըկա տըկներ, տեղընցտեղ կը մըրկին ու կերեցին, ծուխ տըկվե վերեն:

Են տեղ կը գարմանա ու կը բոնի, կերքա:

Կերքա մեկ սարի՞մ գյըլիխ, կը տեսնա, օր մեկ վերու օշխար էնու հառօրվեն կը փախի: Կընգի հետև, կերքա, կերքա մեկ շենլըկ վեր կը մըտի ետա վերու օշխար:

Տըղեն էլ կերքա, կը տեսի, օր մեկ ըխթիյար գհ ըն տեղ: Իրեք ծի էլ կապուկ ա ըն տեղ: Ետա ծիանքյն էլ մեկ սկ ա, մեկ

սըվտակ, մեկ կարմիր:

Ետ խալիվորն էլ տըղին կասա. – Յե՞ր լարիցիր իմ էռու հետև:

Կասա. – Ես չըմ լարեր հետև, ես էկա, են ծի տեսավ, փախավ, էկավ:

Խալիվորն էլ կը պըշկի, օր տըղեն շատ խորոտ տըղա ա:

Տըղեն օր կէմի էրթա, խալիվոր կասա. – Խորո՞տ տըղա, արի՞, ես քյե փառու՞մ տաճ, գյընա՞:

Տըղեն կը տառնա, կը գան խալիվորու մոտ:

Խալիվոր կասա. – Ենա իրեք ծիուց ո՞ր մեկ քյե պիտի, տաճ քյե:

Տըղեն կասա. – Չի ենա սըվտակ ծին պիտեր:

Խալիվոր կասա. – Ենի լավ չեր, համա գի ուզիցիր, քիւ քյեֆն ա:

Ծին կը տա տըղին: Տըղեն կը խեծի, մուղտարօմ կէրթա, ետա ծին կը տառնա ճիրի: Մուղտար մ'էլ կէրթա, ետա ճիրին կը տառնա էշ:

Տըղեն կը զարմանա, կասա. – Խալիվոր ասաց՝ ետի աղեկ չէ՞ր՝ համա ի՞նչ էնեմ, գի պերի:

Մուղտար մ'էլ կէրթա, կը տառնա գիմեշ: Տըղեն շատ կը զարմանա, թե՛ ջանը, եսի ի՞նչ էր՝ եղավ:

Տըղեն կը հըօղկի, փետըմ կը զարնի գիմշու քամկին, գիմեշ կը տառնա հիսան:

Տըղեն կը զարմանա. – Յա՞յ, տե՛ր Աստված, ես ի՞նչ պան ե՞ր՝ ես տեսա, ես ի՞նչ պան ե՞ր՝ էկավ իմ գյըլիս:

Մարք կը լի զըրհւց, կասա. – Տհի հե՞ր ծի զարկիր:

Կասա. – Ապա տու ծի եր, եղար ճիրի, էշ, գիմեշ, դիր եղար հիսան: Գիմեշ եր, մոհիլիվ կը քյելեր, ես էլ զարկի:

Կասա. – Դե՛, գյընա՞՝ էլ ես խըն քյե չըմ իգա, օր ծի զարկիր:

Մարքն էլ կը թողնի, սահարի՞մ ճամբախս կէրթա: Ծին էլըմ կը տառնա, կէրթա ուր խալիվոր մոտ:

Տըղեն շատ կէրթա, քիչ կէրթա, շատ ու քիչ Աստված գիտա, կէրթա, մեկ քաղըյի՞մ ռասստ կը գա:

Կէրթա կահկեն, խաց կուտա, չայ-մայ կը խըմա:

Կը խառցընա կահկաջուց. – Եսա քաղաքյ ինչպե՞ս ա, առուտուր կէղի՞, չէղի՞:

Կահիվացին կասա. – Վոլլա՛, առուտուր կեղի, աղեկ ա: Մեկ մարթըմ օշխար ա պիրեր, կը ծախա, խըտ առնողին քյար չըն ինգիր:

Տըղեն կասա. – Տ'էրբամ, թե էնոնք քյար չընգան, ես տ'առիմ, ես էլ եմ էկեր առուտուրի:

Տըղեն կանի էն տեղ, թամաշա կէնա, խենք ի՞նչըլս բազառ կէնեն:

Կը տեսի, օր էսա օշխըրի տիրոչ ծեռ մեկ շուշե՞ն կա, օշխըրի տեր կասա. – Էսա շուշեն հըլին օսկի էրեք, տըվեք ծի, ես իմ օշխար տամ ծե:

Քանի օր կը պերեն, օսկի կը լըցեն, էսա շուշեն չիլինիր:

Տըղեն կը զարմանա, կասա. – Ես ի՞նչ պան ա, էսա շուշեն առնի առնի՝ քառուն-հիսուն օսկի, էսա քաղըրի վաճառականեր քանի՝ լըցին, չիլինավ, տը բողնիմ, էրբամ էսա քաղըրեն, էսա քաղըրի բազառ ծի պետք չեր:

Տըղեն շատ կերպա, թիչ կերպա, կը տիսնա մեկ սարըմ. քյեշ սար մ' ա, կը տեսնի մեկ մեյմուն: Ուր էրկու-հիեք ծաքյեր կան, ծաքյեր կըլորին սարի գյըլխուց, կէնին գյիւ. կը գան տակ: Մեյմուն կերպա, թե մեկ խասնի, պըռնա, մեկ էլ կը կըլորի, թե մեկ էլ խասի, պըռնա, մեկ էլ կը կըլորի:

Տըղեն կասա. – Տ'էրբամ, էնա մեյմունին եօյնեմ, ծաքյեր պըռնեմ, տանեմ, տընեմ էնու պիւն:

Կերպա, կէօյնա, կը տանի, տընա պիւն:

Տըղեն կը տա ուր ճամբախ, կերպա:

Մեյմուն կասա. – Տըղա՛, տիւ ծիկ աղեկուրեն էրիր, ես էլ քյե աղեկուրեն տ'էնիմ:

Կասա. – Տիւ մեյմուն ես, ծի ի՞նչ աղեկուրեն տ'էնիս:

Կասա. – Առ' իմ էնա էրկու-հիեք մազեր, տա՛ր խըն քյե, աշխար ա, ժամանակ ա, թը նեղուրեն ինգան, իմ մազեր տո՛ւր կրակ, ես քյե կը խասիմ:

Տըղեն մազեր կառի, կը տա ճամբախ, կերպա:

Շատ կերպա, թիչ կերպա, կերպա մեկ քաղըրի՞ն հառեճ, կը տեսնա, օր խալիվորըմ կը զա հառեճ:

Կասա. – Զցիել տըղա, դի՞ր կերպաս:

Կասա. – Վոլլա՛, տ'իյամ խըտ իմ կըսմըթին, տ'իյամ առուտուրի էսա քաղըրըներ:

Կասա. – Կերթաս, համան էնա քաղաքյ առուտուր մ'էնե՛ր,
ընցի՛ր, գյընա՝ հհւրիւշ քաղաքյ:

Տըղեն կերթա էտա քաղաքյ, գյիշեր մըսաֆըր կեղի, խըլի-
սուն կըլնի, կերթա հհւրիւշ տեղ:

Չատ կիյա, թիչ կիյա, շատ ու թիչ Աստված գիտա, կերթա
մեկ ծովու՞մ պըռուկ՝ շոք տըվեր ա վերեն, կասա. – Երթամ ծով,
լողկընամ:

Կը տեսի, օր մեկ ժիկըն դալրեն գարկեր, պերեր ծովափ,
ժիկն էլ համա գախ ա խատի:

Կասա. – Վոլլա՛, տը պառկիմ, իմ օտքեր տամ նըք, էնա
ժիկ տը կլորեմ, երթա մըչ ծովուն:

Կը նըստի, օտքեր կը տա նըք, հհւշիկ-հհւշիկ, դե ու դե,
ըզժուկ կը կըլորա մըչ ծովուն:

Ժիկ լեզի կեղի, կասա. – Ի՞նչ էնեմ, գատըն չըկա՝ տամ թից
փառու:

Կասա. – Տիւ ժիկ ես, ի՞նչ տը տաս, ծի թիւ գանտ չըպիտեր:

Ժիկն էլ էնոր պոշից մեկ թերուըն կը քաշա, կը տա տըղին,
կասա. – Առ էնա թից, ժամանակ ա, թե նեղութեն հինգար, գան
ծովափ, տաս կրակ, ես թից կը խասիմ:

Տըղեն էլ կառի զգթերուու, կերթա: Կը տեսի, օր մեկ խավքըն
ընգեր ա վըր ճամխիմ անորութեն պերան կը պանա, կը խըփա,
համա գախ ա, օր խատի:

Կասա. – Վոլլա՛, ես էսա խավքիւն փըշու՞մ խաց-նաց տը
տամ, ուտա, բալքո խոզի գա հինե, մեղք ա, չըխատի:

Խաց ու պան էնոր խուռջուց կը լըցա հանեն, թոնի, կերթա:

Տըղեն սահարի՞մ ճամբախ կերթա, խավքն էլ խաց կուտա,
պըռօծի, կը կայիմնա, կը թըռի, կերթա, տըղին կը խասի:

Կասա. – Տիւ ծիկ աղեկութեն երիր, առ էսա իմ թերուու, օր
նեղութեն ընգիս, թերուու տուր կրակ, գամ, թից կը խասիմ:

Տըղեն կառնի թերուու ու կերթա: Չատ կիյա, թիչ կիյա, կը
տեսի՝ մեկ խալիվոր մ'էլ կը գա հանեն:

Խալիվոր կը խառցընա. – Զըհե՛լ տըղա, դէ՛ր տ'երթաս:

Կասա. – Տ'երթամ առուտուրի, հիտն իմ կըսմըրի:

Կասա. – Տիւ ծի լըսես, տը տաննաս յաս, մեղք ես:

- Ապա տաննամ, յամ, ի՞նչըխ էնեմ, իմ խոր աչկ դիւնեի մա-
լից չըկըշտանար, երթամ, իմ խեր ծի էմա տը ճամխա:

- Տաղիկը, գյունա՛, ի՞նչ օր տեսեր ես, քայլ խոր կըսա՛ էրա, ել քե չընամխեր:

Կասա. - Վոլլա՛, ես շատ պան եմ տեսեր ճամխի խետ:

- Ի՞նչ ես տեսեր, ծի ասա՛, խենքը՝ քայլ տիսած պաներ ի՞նչ ա:

Տըղեն կասա. - Եկա սարի՛ հառեր, ճիշ քարեր սարի գյուլխուց կը գյեն տակ, պստիկ քարեր կը տեն հել վեր, կելին սարի գյուլիխ:

Կասա. - Գյիտե՞ս՝ են ի՞նչ հապով էր:

Կասա. - Չե՛, ես ի՞նչ կիտիմ:

Կասա. - Են ճիշ քարեր են ճիշ մարթերն ա, օր ենոնց պաշտոնց տ'ընգին, գան տակ, են պստիկ քարերն էլ են խեղճ մարթերն ա, օր կը պանձրանան, կեղին ճիշ պաշտոնի տեր:

Կասա. - Աղեկ, ենի ենաբս, ապա տեղ մ'ել եկա, չորս պըղինծ տըրած են վըր անգըռներուն, էրկու ծերի պըղինծ ճկւր կեռեր, կը թալեր մըշ իրարու, կրակ տըկներ կը վառեր: Էրկու միջու պըղինծ կրակ էլ չըկա տըկներ՝ տեղընցտեր կը մըրկին ու կիրիցին, ծուխ կերպա, ես ի՞նչ ա:

Կասա. - Են էրկու ծերի պըղընձներ էրկու թագավոր են, իրարու կը զանին, իրարու պան չեղիր, ամա միջու պըղընձներ ժողովուրբն ա, օր կըսիվ էլ չեներ, կը չարչըրվի, կը մըրկի տեղընցտեր:

Կասա. - Տեղ մ'ել զացի սարի՛ գյուլիխ, թերու է՛ իմ հառցըվեն փախավ, զացի, ինգա շենլըկըմ, մեկ խալիվորըմ կեր, ծի ծի՛ ետուր, ետա ծին տառցավ, եղավ ճիրի ու էշ ու գիմեշ ու հիսան: Ապա ենի ի՞նչ էր:

Կասա. - Տե՛ շատ հարուստ եք, վաղ քը ծեր խեր մեսի, թե տիւր ենոր մալի կեսըն ցըրվեր աղքըտներուն, ծեր դավլար տը վելեր, թե չէ, ենաբս չենեք՝ տ'աղքըտանաք, տէճնեք, լանգե՛մ կը զանեք ծեր դավլորին, դավլար ծենե տը փախի՝ ինչըն օր փետըմ զարկիր գիմշուն, գիմեշ փախավ, գյունաց:

- Ապա, պապիկ, - կասա, - Եկա մեկ քաղաքյըմ, քազանի մեշ տեսա՛ մարթըմ մեկ շուշե մ'ումեր ծեռ, օշխար կը ծախեր, կասեր, թե մեկ ետա շուշով օսկի տեք ծի, ես օշխար հըմեն տը տամ ծե: Ետա քաղըյի թիւջըրներ քանի օսկի պերին, չիլինավ:

Կասա. – Են էլ հիսնի աչկ ա, դհւմեի մալն էլ եղի ենոր, կըշտում չըկա, չըլըցվիր:

Կասա. – Ապա ինչո՞վ կիլինի, ի՞նչըխ տ' եղի:

Կասա. – Քիսան օր մեռի, փըշու՞մ խող կը լըցեն ենոր աչկեր, կը կըշտանա են փըշու՞մ խողից: Տեւ էլ օր կը տանօնաս կերպաս, ետա օչխըրի տիրոչ ասա, թե՛ ես քիւ շուշեն հիլինեցի, քիւ օչխար տանեմ, թե չիլինեցի՝, ինչ օր խըն ծի օսկի, պան կա՛ տամ քյե: Թե օչխըրի տերն ասավ՝ արի՝ հիլինա՝, մեկ ճանգըն խող լից, շուշեն կիլինա, ա՞ռ ենու օչխար, գյընա:

– Ապա էկա սար մ'էլ, մեյմունի ծաբյեր կը գյին գյիւ, կը գյեն տակ, ես էլ էօգնեցի, տարա, տըրի սարի գյըլիխ, մեյմուն էլ ծի քանի՞ն մազ ետուր, ծի ասաց՝ թե նեղութեն ընգիս, մազեր տուր կրակ, ես կը գամ քյե խասիմ, են ի՞նչըխ կը զըրուցա:

– Են փարի ա, եփ նեղ մընաս, կը գա, քյե կը խասի: Են ծուկն էլ, են խավըյն էլ փարի են, կը գան, քյե կը խասին:

Տըղեն կը տանօնա, կը գա:

Կը գա ետա քանդաք, կը տիսի, օր ետա օչխըրի բազառ քյար ըն ինգիր հալա:

Կասա. – Օչխըրի՝ տեր, քիւ շուշեն օր հիլինեմ, քիւ օչխար տը տա՞ս ծի:

Կասա. – Խա՞, ես տը տամ քյե իմ օչխար: Օր չիլինցիր, ծի ի՞նչ տը տաս:

Կասա. – Իմ խետ ինչ օր օսկի կա, տամ քյե:

Տըղեն կը պերա, ճանգըն խող կը լըցա, շուշեն կիլինի:

Զօշխար կառնի, կը գա:

Օչխըրի տեր կասա. – Վոլլա՛, ետա քիւ գյիտութեն չէ՞ր, քյե շանց են տված:

Տըղեն կառնի ետա կըտիր օչխար, կը պերա ենոր խոր տուն: Խեր կը պըշքա, օր տըղեն առավ ետա կըտիր օչխար, էկավ:

Խեր կը կանչա, տըղեն կը տանի, կասա. – Ես քյե են չափ փարա տվի, պան տվի, ետա օչխա՞ր մենակ պերիր, ի՞նչ տը վաստըկենք ետորից:

Ախր դե անկուշտ ա:

Են էլ կը պատմա ուր գյըլխու գալած, խալիվորի տըված պատվեր:

Խերն էլ օր կը լըսի ետա պատմութեն, խոր աչկն էլ կը կըշտանա:

Սեկ քիչ ժամանակ կը մընա, խեր կասա ուր խըզմաք-քարմերուն. – Խարցներ իմ տղողից, խենք ո՞րի ախչիկ կուզա, երամ, կարգյեմ:

Տըղին կը խառցընեն, տղեն կասա. – Իմ խեր գյիտա՝ վո՞ն կը պերա, թը՝ պերա:

Խերն էլ որ մեկ ախչիկ կուզա, տղեն չըխավներ ախչըկեն:

Սեկ օր երկու աշըր կը գան էնոնց տուն մեհվան:

Ետոր խերն էլ էտոնց կը խառցընա. – Տհւք կան գալացող մարք եքյ, խորոտ ախչիկըմ չը՞յ գյիտի՝ դիր կա, պերեմ իմ լաճուն:

Էտոնք պա՞ն չըն ասեր, խերն էլ չըխառցըներ:

Տղեն էլ հիրիկուն ետա աշըրներուն խաց, պան կառի, կը տանի հօղեն, կուտին:

Են մեկ աշըր մեկին կասա. – Ընգե՞ր, մեկ խորոտ ախչիկ գի Վանա թիւջրի՞ն տուն, վոկ գացեր, չըկարցի պերի: Շարք կը պըռնա, օյին կը խաղա, ջամբազութեն կէնա, չըն կանա պերեր: Շանց տանքյ եսա տղին, երթա, վախսենանքյ՝ չըկանա պերա:

Են մեկն էլ ասաց. – Շանց տուր, են էլ թէրա, բալքո ճամբազըմ կընդի, պերա:

Տըղին կասին. – Վանա ֆըլան թիւջրին լավ ախչիկըմ կա, գացեք պերեք:

Տղեն էլ խըզմաքքարներուն կասա, էնոնք էլ խոր կասեն:

Խերն էլ կէլի, կերթա: Կերթա թիւջրի տուն:

Իտոնց էլ իրեք արոտ եսպիս ուզով տղրուկ ա, վո՞ն օր երթա, միշնեկ արոտ նըստի, գյիտեն գի էկեր ա ախչըկե:

Վաճառական էլ կիյա, միշին արոտին կը նըտի:

Ախչըկե խոր կասեն. – Արի, մեկ մարթըմ էկեր, նըստեր ա վըր միշին արոտին, արի՝ ջիւյա՞ր տու:

Ախչըկե խեր կը գա, պարևնա կէղին: Խաց, պան կը պերա, կուտին, կը քընին չուր խըլիսուն: Իրեք օր չըխու անոնց աղաք չի՝ մըսաֆըրին պան խառցընել, իրեք օր կը թըմի, կը խառցընա:

Կասա. – Ի՞նչ ա, տէւ ախչիկ հապի՞վ ես էկեր, հի՞ւ ես էկեր:

Կասա. – Էկեր եմ՝ ախչիկ ուզեմ իմ լաճուն:

— Ծառ աղեկ, ես չըմ ասեր՝ չըմ իտար: Ապա իմ ախչիկ օր ուզած մարդ չեղի, չառիր:

Լաճու խերն էլ կասա. — Երբամ, իմ տըղեն ճամխեմ, գա, խավնավ, թ'արի, չըխավնավ, թը չառի:

Կերբա, լաճուն կասա: Լաճ կէլի, կերբա:

Տըղեն էլ կերբա, միջին արուին կը նըստի, ախչըկե խոր կասին թե. — Թհրւորի տըղեն էկեր ա, արի խենք:

Կը գա, լաճուն պարևնա կեղի, խաց, պան կը կերցուցա: Լաճ մըսաֆըր կեղի չուր իրեք օր:

Իրեք օր կը թօմի, կը խառցընա տըղին. — Իմ ախչիկ հապի՞վ ես էկեր: Իմ ախչիկ բաղչեն ա, գյընա՛, տե՛ս, թե էն թյ խավնավ, յան տիւ ինոր խավնար՝ առեք իրարու, թե չըխավնաք՝ մ'առեք:

Տըղեն կէլի, կերբա բաղչեն՝ ախչըկե մոտ, տըղեն ու ախչիկ հիրարու կը տեսին, հիրարու կը խավնին:

Ախչիկ տըղին կասա. — Զի շարքըն կա, խըն քյե պըոնեմ, թե տիւ իմ շարք խանի՛ր, չըխու ես քյե խավներ եմ, տ'առիմ, չէ՛ չըմ առնիր:

Տըղեն կասա. — Թիւ շարքեր ծի ասա:

Ախչիկ կասա. — Օր իմ շարքեր չըխանիր, քյե տը տամ պըռնել, չում նըկա քառսուն մարթ տըվեր եմ պըռնել, շարք չըխանած:

— Ղե՛, ասա քիւ շարքեր:

Կասա. — Տիւ գյընա՛, պաղկըվի ո՛ր մեկ տեղ քիւ ջան կուզա: Կեսօրին՝ սահաք վեցին, թե ես գյիտցա՝ տիւ դի՛ր էր, գյիտցա: Թե չըգիտցա, ծի կը մընա մեկ շարք: Գյընա՛, պաղկըվի՛, սահաք օր վեց թըմավ, էլի՛, արի՛, ես քյե կասեմ՝ տիւ դիր էր պաղկըվեր:

Տըղեն կէլի, կերբա, կը զըվոռա թաղը վեր, կը մըտի մեկ տունը վեր չուր սահաք վեցին, կէլի, կը գա:

Տըղեն օր կերբա, ախչիկ կասա. — Տիւ ետա խելքո՞վ ծի տը տամիս, տիւ գացիր ֆըլան փողնով զըվոռար, գացիր ֆըլան մարթիւ տուն:

Կասա. — Գյընա՛, վաղմ էլ, մեկէլ օրն էլ քյե պախա՛, թե քյե կընդա, են մեկ էլ շարքն կը պըռնեմ:

Տըղեն էլ կէլի, կերբա: Կերբա ծովու պըռուկ, են ծովու ծըկան պատմութեն կընգի միտ:

Կը խանա թերուտ, կը տա կրակ, մեկ էլ կը տեսի, օր ծով
եղավ ֆրոբոնա, ծուկ էկավ:

Կասա. – Ախատե՛ր, ի՞նչ նեղութեն ա քյե եղեր:

Կասա. – Եսպես շարք մ'եմ պըռներ ախչըկե՛մ խետ. դիր
պաղկըվիմ, ծի կը կընդի, տիւ չը՞ս կանա՛ չուր կեսօրին ծի
պախսե՛:

Կասա. – Դամա օտքերով արի, իմի իմ փոր:

Տըղեն էլ կիծի ծըկան փոր, ծուկ կառի, կերքա մըչ ծովուն
չուր կեսօրին: Կեսօրին տըղեն կը խանա տիւս: Տըղեն կը գա՛:

Ախչիկ կասա. – Տիւ գացիր, մըտար ծովու ծըկան փոր, ես
քյե տեսաւ:

Են մեկել օր տըղեն կերքա սար, հականա մեյմունի մազ կըն-
գի միտ, մազ կը տա կրակ, մեյմուն կը գա՛: Դիւման տըվե՛ սար,
քար պըռնե՛:

Մեյմուն կասա. – Ախատե՛ր, քյե ինչ նեղութեն կա, ծի ասա՛,
շո՛տ էրա:

Կասա. – Եսպես շարք մ'եմ պըռնե ախչըկե՛մ խետ. դիր
պաղկըվիմ, ծի կը կընդի: Չի տա՛ր, պախսա՛:

Մեյմուն կը տանի զգտողեն պըռակի մեջ, կան կը գա՛, փը-
տուկ ժառօմ կը կընդի, տըղեն կը մըտուցա փուտը վեր, կըր-
ճոնքյտեր կը տա դեմ չուր կեսօրին. դորիս տըղեն կէլի, կը գա՛:

Ախչիկ կասա. – Վոլլա՛, ես քյե չըտեսա ես անգամին:

Ծըհաղմեր ասին. – Վոլլա՛, ախչիկ գյընաց:

Ախչիկ ասաց. – Մեկ շարք մ'ել կա, վաղ են էլ քիւ խետ կը
պըռնեմ, թե խանիր՝ ծի կը տանիս:

Կասա. – Քիւ շարքն ասա՛ ծի:

Կասա. – Վաղ ես կը նըստիմ ըստա, թե տիւ էկար, ծի խա-
նիր զըրիւց, ես քյոն եմ, թե չըխանիր զըրիւց, ես քյե տը տամ
պըռնել:

Տըղեն մեկել օր կերքա, ի՞նչըն օր կենա, ախչիկ չէլներ
զըրիւց, կը տառնա, կը գա՛:

Ախչիկ կասա. – Վաղն ու մեկելն էլ թե տիւ ծի չըխանիր
զըրիւց, քյե տը տամ պըռնել:

Տըղեն կը գա՛, կը մտածա, խավքիւ թերուտ կընգի միտ: Թե-
րուտ կը տա կրակ, խավք կը թըոի, կը գա՛ տըղի մոտ:

Խավը կասա. – Ախաբե՛ր, ի՞նչ էղավ քյե, տիւ ենպես աջալա ծի կանչեցիր:

Կասա. – Ախչըկե՛մ խետ ենպես շարթ եմ պըոներ, չըմ կանա խանու զըրիւց:

Կասա. – Վաղ ես կը գամ, կը պաղկըվեմ տըռան հետև, տիւ արի, ախչըկեն պարև տուր, օր ախչիկ քիւ պարև չառներ, տիւ ասա՝ պարհվ քյե, տիւու:

Տըղեն կերթա, խավըն էլ կը պաղկըվի տըռան հետև:

Կասա. – Պարև քյե, ախչիկ:

Ախչիկ չէլներ զըրիւց:

Տըղեն կը տառնա, կասա. – Պարև քյե, տիւու:

Խավը կասա. – Ասծու պարին, տիւ պարով էկար: Ամոք չէ՛ր, խազար ափսոս, օր տիւ էն օռոսպի ախչըկեն պարև տվիր, տառցիր, երթանքյ:

Ախչիկ չէլնի զըրիւց:

Տըղեն մեկէլ օր կերթա մըտ խավը:

Խավը կասա. – Ես կերթամ, էնոր պանցի հիտև կը պաղկըվիմ, տիւ էլ օր կը գաս, էն քիւ պարև չառիր, ասա՝ պարև քյե, պանց:

Տըղեն մեկէլ օր էկավ, ախչըկեն պարև ետուր, ախչիկ պարև չառեց:

Ասաց. – Պարև քյե, պանց:

Ասաց. – Ասծու պարին, խազար պարով ես էկեր: Ախաբե՛ր, օրըմ ես էկա մեկ տեղ, մեկ դիւրգար ուսթե՛մ փետե տըղե՛մ շինեց, թարգի մ'էլ ետոր ջուլ կարեց, խագիւց, մեկ կարդոցվոր մ'էլ կարդաց, խոգի էկավ հինն, վերչ էլան, վերեն կըռվան իրեք: Են կասեր ծի, են կասեր ծի: Օր տիւ եղեր, վի՞ր տը խասուցեր:

Կասա. – Եսն եղեր, տը խասուցեր ետա թարգում:

Խավըն էլ կասա. – Եսն էլ եղեր, կը խասուցեր էն դիւրգարին:

Ախչըկե կողեր կը պըոնա, կը հերսոտի:

Կասա. – Ծո՛ անգիտներ, եսն եղեր, տը խասուցեր էն կարդոցվորին:

Կասա ու ծեռ կը գանա վըր պանցին, խավը կը թօսի, կերթա:

Ծըհաղմեր են տեղ ծեռքյեր կը զանին հիրար, թե ախզըկե շարքեր էսան, ախչիկ գյընաց:

Կը Վազին խոր մոտ, խոր կասեն, թե՛ քաւ ախչիկ գյընաց, լաճ էնու շարքեր էսան:

Խերն էլ կասա. – Աստված էն տըղին շատ արև տա, են քանի մարքերն օր պըոներ ա, էնոնց մեղքյն ընգեր ա իմ վիզ:

Ծի՞ն կը տա տըղին, մեկ ախչըկեն, մարքերն էլ պըոնատնեն կը խանա: Տըղեն կառի զախչիկ, կը գա ուր տուն: Կը փըսակեն, վեց օր, վեց գիշեր խաղ ու խաղտուն կէնեն: Էնոնք կը խասեն ուրենց մըրազին:

Մենք տանանքյ դիր պըստիկ ախսպոր վըրեն:

Են մեկէլ ախսպերն էլ կասա. – Ես էլ տ'էլիմ, երբամ, կան գամ աշխար վեր:

Խերն էլ կասա. – Կերպա՞ս, վոն օր քյե ռաստ կը գա, թզ դիր մըսաֆըր կէղիս, թե գյեշ էղին, թե գեղեցիկ էղին, օր քեզնից կը խաղընեն, տիւ շասես՝ տիւք ավարա եք, յան գյեշ եք, ասա խորոտ եք, աղեկ եք:

Տըղեն կէլի, կէրբա, շատ ու քիչ Աստված գյիտա, մեկ քարի՞ն հանեն մըսաֆըր կէղի:

Կիշկա, քարի մեջ մեկ հեր կէրևա, կը մըտի հինե, կը տեսի մեկ սանդիւխըմ օսկի գի ըն տեղ: Կը պըշկի, օր ջըղարի կուրի մ'էլ ըն տեղ, հիլին ջըղարա գի հինե:

Խուռօշի մ'օսկի կը լօցա, ջըղարի կուրին կառի, կէնի տիւս, կասա. – Ջըղարե՞ն խըմեն ու երբամ:

Ջըղարե՞ն կը խըմա, կը տեսնա մեկ հաջլաջկը, թաժ հիսնե, թինը ու պերան՝ մեյմունե, ջանավար մ'էն դեխեն էկավ:

Կասա. – Տիւ հե՞ր իմ օսկին առար, իմ ջըղարեն առար:

Կը խասին, կը կըռպին, իրարու զանին:

Շատ կըռպին, տըղեն էնի կը տընա գյետին, էտիկ կը տառնա մեկ շատ խորոտ ախչիկըն:

Տըղեն տանակ կը խանա, օր մորբա, ախչիկ կասա. – Աը՝ գանիր ծի, ես քյե, տիւ ծի:

Կէլին էն ու ախչիկ, խըմորաց կէրբան: Շատ կէրբան, քիչ կէրբան, շատ ու քիչ Աստված գյիտա, կէրբան մեկ գյետի՞ն կարմընջ վեր կընցին: Ետա ախչըկե սու օտքից կը պըօժի, կընգի գյետ:

Ախչիկ կը տառնա, օր սոլ կը նոյի, լաճ կասա. – Դե՛, վազն
արի, եսա բհղ գյետի մեջ սոլ դի՞ր տը կը նոյիս, չերևա, քյելի՛
երանք:

Մեկ ժամանակը կերպան, տեսան մեկ տունը գի մըշ
տաշտին:

Տըղեն ախչըկեն կասա. – Ենա ի՞նչ տուն ա:

Ախչիկ կասա. – Են իմ տուն ա, քյելի երանքը ըն տեղ:

Կերպան տուն, օր գի երկու ծի կապուկ ըն տեղ, մարթ չըկա,
օղորք ախչըկե տուն:

Մեկ վեց-յոր տարի մ' ետա տուն վեր կապըրվին:

Իտոնցն էլ մեկ ախչիկ, մեկ լաճը կեղի:

Ենոնքը թը մընան էն տեղ:

Արաքներու Միրի լաճ կելի ուր խոլամներով, ծիանք կը
խեծի, կերպա կան գալու:

Կերպա ետա կարմընջի տակ, Միրե Արաքներու լաճու ծին
կը պըշկի մըշ գյետին, են փառու սոլ շող կը տա ծիու աչկերուն,
ծին կը խըռոյի, կը տառնա: Միրե Արաքնու լաճն էլ կը տեսի:

Խոլամներուն կասա. – Մեկ լուսեղեն զատը գի ենա գյետի
մեջ, եճե՞ք խանեք, խենք ի՞նչ ա:

Կեծին, խոլամներ կը խանեն, օր մեկ անթիկա սոլ:

Միրե Արաքնու լաճն էլ կառի սոլ, կը պըշկի:

Կասա. – Երանի ես եսա սոլի տեր կը նոյեր, թը մեռներ:

Կը տա խոլամներուն. - Գացե՞ք, եսոր տեր կը նոյեք, վո՞ն օր
կը նոյի, գա, ենոր կը շռանոցով օսկի տամ:

Կերպան եսա կողմեն չում հաջմու խող, ենա կողմեն չում
օսմանցու խող, չեն կը նոյիր դիր կան կը գան:

Տըղեն էլ օր խընչ օր մառախչի կեղի, շատ կը զայիֆնա: Մեկ
օր երկու դավրեց կը գան Միրե Արաքնու տուն:

Կը խառողնեն մոտեն. – Դավրեշներ, եսա սոլի տեր տիւքը
սալուխա չըք իտա՞՝, տիւք կան գալացող մարթ եք:

Դավրեց կասա. – Պերե՞ք, խեմ՝ ի՞նչ սոլ ա:

Սոլ կը պերեն, դավրեց կը պըշկի վերեն, մըկ դավրեց ըն մը-
կին կասա. - Ըն թաք տուն, օր տաշտի մեջն եր, տիւ տեսա՞ր են
կը նգան սոլեր, երկուս մեկ տեսակ չեր:

Կասա. – Վոլլա՛, եսա սոլ ման կը տա էն մեկ սոլին ընգերն ա:

Կասա. – Ետա սոլ տղվե՛ք, տանենք փողցենք, թե էնորն ա, աղեկ, թե էնոր չի, ել սալուսա չընք կանա տա:

Դավրեշն առավ սոլ, գյընաց, գյընաց ետա տաշտի միջու տուն, սազ երաց, պան երաց ետա կընգան հանեճ: Սոլն ել մախսուս կախեր էր սազից, թե էնորն ա, տը ճանչընա:

Կնիկն ուր սոլ ճանչընավ, ասաց. – Դավրե՛շ, ետի ի՞նչ սոլ ա, չըս ծախե՞ր ետա սոլ:

Ասաց. – Ես դավրեշ մարք եմ, թը քյոն ա, կը ծախեմ, թը քյոն չի, չըս ծախե՞ր ետա սոլ:

Կնիկն ել ասաց. – Իմ սոլն ա:

Ելավ, քանի մ' օսկի ետուր դավրեշին, մոտեն առավ:

Դավրեշն ել տանցավ, գյընաց Սիրե Արաքրու լաճու տուն:

Ասաց. – Կընդա, գի տաշտի մեչ մեկ շենընկըմ կա, գի էն շենընկ վեր:

Էն ել ելավ, դավրեշի կըշոանոցով օսկի ետուր դավրեշին, դավրեշ երող, գյընաց:

Տըղեն ելավ, մեկ տաս-քըսան ծիավոր առավ ու քըշեց. գացին տաշտի միջու տուն:

Գացին տուն, պայա եղան, մարքն ելավ, էնոնց պատիվ պըոնեց, խաց կիրցուց:

Արաքրու լաճու աչկն ընգավ կնիկ, կնիկ մ'ասի, լուս տըվի վերեն, շամալ մոտեն կերպա:

Արաքրու լաճու աղջլ գյընաց, ինգավ ետա տեղ, խոլամներ ճիւր-ճիւր թալեցին, սիրտ մաժեցին, տըղեն եկավ խոգի, հարավ:

Ելավ Սիրե Արաքրու լաճ, կայնավ տჩւո, խոլամներուն կանչեց:

Ասաց. – Ի՞նչըս էնենք, օր էսա ախչիկ տամենք, էսա մարքն ըսպանե՞նք, ի՞նչըս տ'էնենք:

Ըն մեծ խոլամ ասաց. – Տիւ իրկան կանչա՛ տჩւո, խետ գըրհւցա՛, մենք կը մըտենք, կընգան կը խառցընենք, թը կը գա, թը չի գա:

Մեկ ճամխեցին, իրիկ կանչիցին, պիրին, մեկ ել ճամխեցին, գյընաց, կընգան կը խառցընա:

Ասաց. – Սիրե Արաքրու լաճ քյե կը սիրա:

Կնիկ ասաց. – Կը սիրա, ի՞նչ ընեմ, ծի իրիկ կա, թը տառնա, էրքա, ես ինոր ուզած կնիկ չեմ:

Խոլամ տառցավ, էկավ Սիրե Արարու լաճու մոտ:

Ասացին. – Կասա՝ ես էնոր ասած կնիկ չեմ, դյու վեր էկեր ա, թ' էրքա:

Սիրե Արարու լաճն էլ ասաց. – Չեղի՛ր, գհոռվ տ' առինք, իյանք:

Ենոնք էտա զըրիւցի մեջ իրիկ հիմցավ, թե էտոնց սիրտ ավեր ա, մեկ պանի մ' էկած:

Ըս տեղ իրիկ ասաց. – Ինչի՞ եք էկեր, ծի ասե՞ք, ի՞նչ քըսք ու փըսք ա:

Ըս մեկ խոլամ ասաց. – Ընչի՞ քյենե կը վախենա՞նք, գհ էկեր ենք, քհւ կնիկ կը տանենք:

Էլան, հիրարու խետ կըովան: Կնիկն էլ տընեն էլավ, գարկին ըն տեղ, վեց խոլամ ըսպանեցին: Մեկէլոնք Սիրե Արարու լաճ առեց, փախավ, գյընաց ուր տուն:

Սիրե Արարու լաճ խըլիսուն մեկ խազար ջան ասքար կապեց, գյընաց վերենքցյտեր:

Էտա քհւզի տըղեն, ուր կնիկ նստած ա փանջարեն վեր, տեսան օր գանոնց մեկ խազար ջան ասքար կը գան:

– Ղե՛, էլի՛, կնիկ. – ասաց, – ծիանք խեժինք: Սիրե Արարու լաճ ասքար քաշեց, էկավ կըոիկ:

Մարթն էլավ, ծին խեծավ, կնիկն էլ ծին խեծավ:

Կնիկ մարթուն ասաց. – Տհւ էրքա՞ս կըոիկ, թե՞ ես:

Մարթն ասաց. – Ես կերպամ:

Կնիկ ասաց. – Չէ՛, ես անգամին ես կերպամ, անգամ մ' էլ օր գան, տհւ գյընա:

Կնիկ էլավ, էնոր սիլախըյեր կապեց վերեն, ծին խեծավ, գյընաց:

Գյընաց խասավ տեմ, Սիրե Արարու ասքար էկավ տեմ:

Կնիկ ետ տառցավ, մախսուս փախավ հառընվներուց, էնոնք լարիցին հետև, կնիկ փախավ, չուր էկավ, էլավ տան տհւու: Սիրե Արարու լաճու ասքյըներն էլ որն օր կտրիծ ա, հառեն էկավ, էնպես, օր կնիկ տեսավ՝ ասքար հերկընցեր ա խընդ ճամ-խին, մեկ մեկի չըն խասիր, թուր քաշեց, ընգավ հետզվներ:

Դիր ասքար մեկ մեկի չըխասավ, ճառտեց, տարավ, էսան
Միրե Արարու տուն: Միրե Արարի լաճն էլ փախավ, գյընաց տուն:
Կնիկն էլ տառցավ, էկավ տուն:

Կընգան իրիկն էլ նստեր էր փանջարեն, սովորավ կընգան
կըոիվ:

Մեկել օր Միրե Արարու լաճ գինա ասքար կապեց, էկավ
վերեն կըոիվ:

Դիրիս կնիկ մարրուն ասաց. — Տհւ սովոր կըոիվ,
ժամանակ քյե ա, տհւ գյընա:

Սարբն էլ էլավ, ծին խեծավ, գյընաց ասքյըրի հառնե, էնու
սիլախսրյեր կապեց, գյընաց, տառցավ, փախավ:

Ասքար լարեց իրկան հիտև, չուր էկան տան տիւռ:

Ասքար հերկնցեր ա խընդ ճամխին, մեկ հիտև մեկու չըն
խասիր: Մարբն էլ տառցավ հիտև, ասքար ճարտեց, փախցուց
տարավ, չուր խասուց Միրե Արարու տիւռ: Լաճ պըռծավ, փա-
խավ:

Կանչեց, Միրե Արարու լաճուն ասաց. — Մը՝ փախեր, հերեն
մաքյերու կըոիվն ա, հեսօր խոյերուն ա:

Էն էլ տառցավ, էկավ տուն:

Միրե Արարու լաճու վերեն խուր համ ասքյըրի մառախ,
համ կընգե մառախ՝ ի՞նչ էնեմ, ի՞նչ չենեմ:

Էտա մառախի մեշն ա, մեկ օր պառավ կնիկըմ գյընաց
տուն, նստավ, կալոն կը խըմա, հերկեն կալոնըմ՝ էսա պատից
կիյա էնա պատ:

Խառցընեց թե. - Միրե Արարի լաճ ընչի՝ էնպես զայիֆցեր
ա:

Ասին. — Էսպես պա մ' ա:

Ասաց. — Տընաշեն, էնի իմ մե՛կ ճըկըրի պան ա, ընչի՝ ծի
շոտ չասեցիք:

Ասին. — Ելի՛, գյընա՛, խիմ՝ ինչպե՞ս տը պերես, օր քիւ
ճըկըրի պան ա:

Ասաց. — Ես կերբամ, թե կարցա օյինըմ խանել էնոնց
գյըլիխ, կէնեմ տամիս, խող կը տամ քամուն, թոզ կէնեմ, տիւ
տեսներյ, էկերյ:

Պառավն էլ էլավ, գյընաց:

Գյընաց տըոան հառեճ, տիւր փակուկ էր, նըստավ, կնիկ էկավ տիւր, խաղընեց, ասաց. – Տհւ հհ՞ւր ես էկեր, ի՞նչ պառավ ես:

Ասաց. – Ես ճամխորթ եմ, էկեր եմ, ծեր տուն մեհվան տ'էլնեմ:

Կնիկ ասաց. – Էլի՛, արի՛ խաց կեր ու գյընա՛:

Պառվուն խաց էտուր, մըլեց տիւս: Պառավ նստավ տըոան վըրեն չուր իրիկ նեճրից էկավ իիրիկուն:

Ասավ. – Տհւ ընչի՛ ես նըստեր ըստա:

Ասավ. – Ես ճամխորթ եմ, քհւ կնիկ չերող գամ տուն, ծի ա՛ն տուն, չում խըլիսուն մընամ ու էրբամ:

Մարրն էլ ասաց. – Արի՛ էրբանքյ, մընացի՛ր իմ տուն չում խըլիսուն, գյընա՛:

Մարրու կնիկ ասաց. – Յո՞ւր պերիր էտա պառավ, մը՛ պերեր: Կնիկ ազգ անտատար են, չար թըշնամի են:

Ասաց. – Դորք տիւ փարի եքյ, հիսանի իրես չօքյ ուզե տեսնե:

Կնիկն էլ հըռըկավ, ասաց. – Դե՛, թը մընա, խենքյ ծի՛ վնաս տ'էնա, թի՞ քյե:

Կնիկն քողին տուն: Պառավ շոշոտ կէլնի, քասեքյ կը լովա, ճկւր պերա, տախտ կավիլա, ճկւր կը լոցա էնոնց ծեռքեր, կը լովացվին, զինքյ կտրիծ շանց կը տա:

Մարրն էլ կասա. – Աղեկ ա, էտա պառավ թը մընա էտա տեղ՝ ճկւր-միւր պերա, տախտ ավիլա, խըզմաք էնա:

Կնիկն էլ կասա. – Քհւ խանքրիկ էնենքյ:

Խըլիսուն մարք կէլի, կէրքա նեճիր:

Պառավ ու կնիկն կը մնան տուն:

Պառավ կընգան կասա. – Խազար ափսոս, օր տիւ էտա մարրու կնիկն ես:

– Յե՛, ընչի՞ց, ի՞նչ հապիվ:

Կասա. – Ապա էնի մինակ ըստա, նա քյե ընգերըմ, նա պա՛մ ի՞նչըխ քհւ թեհն կէլի:

Կնիկն կասա. – Գհ էղավ, իմ լաճու խետ, իմ ախչըկեն իմ թեհն կընցուցեմ:

Կասա. — Խոզե տիւ Սիրե Արաքրու լաճու կնիկն եղիր, օր ըստան խատ քյե պիս քիւ հառեծ, քյե խզմաք աներ, տիւ քյե սիւ տեր, էլեր ու մըտեր ու քիւ քյեֆն երեր:

Կնիկն է կասա. — Ե՛, հնչըլս էնեմ, գի իմ կըսմաք էսա մարքուն էր:

Պառավ ասաց. — Ես քյե պան մ'ասեմ, լե կը վախենամ:

Ասաց. — Մը վախենա, ասա՝, հե՞ր կը վախենաս:

Ասաց. — Էտա մարք թո՞դ; արի՞ քյե տանիմ Սիրե Արաքրու լաճուն:

Ասաց. — “Պառավ, ետ էլ կըսա” յա, կեղի՞:

Ասավ. — Խա՞, հե՞ր չեղի, խազար էնալ երած ան, ուրենց իրկընիր թողած, քյոն էլ թող եղի խազար ու մեկ:

Ասաց. — Պառավ, տիւ գյիտե՞ս, թե Սիրե Արաքրու լաճ ձի կուզա՞, ձի չուզե՞ր:

Ասաց. — Ծա՞տ, ես գյիտեմ, օր ըգբյե շատ կուզա:

Ասաց. — Պառավ, ի՞նչըլս երբանքյ, համան թողինքյ երա՞նքյ:

Ասաց. — Օր տիւ ձի կը լսես, էլի համան ծի՞մ տիւ, մեկ ես, խեժինքյ ու երբանքյ:

Ասաց. — Գանքյ, վախենամ՝ իմ իրիկ գա, կըոիկ էնա, մարքասպանութեն եղի: Թը գա տուն, օյի մ' էնոր գյըլիխ խաղանքյ, նոր երբանքյ:

Պառավ ասաց. — Տիւ գյիտես:

Ասաց. — Պառավ, կայնի՞ թը գա տուն, ես էնոր կուվաք հիմնամ, խեմ քանի մ' ա, նոր օյինըմ կը խաղանքյ գյըլիխի:

Մընաց հիրիկուն, մարքն նենքից էկավ: Խաց տըրին հառեծ, կերավ: Պառավ ճիւր էպի, ծեռքյեր լրվաց:

Կնիկ ասաց. — Մա՞րք, էսա յոր տարի քյե առեր եմ, ես քիւ կուվաք չըկիտցա, խեմ քանի՞ մ' էր, քանի՞ մ չէր:

Ասաց. — Ի՞նչ գործ ունես իմ կուվաքից:

Ասաց. — Կեղի, օր էլմէ գան վերեն կըոիկ:

Մարքն ասաց. — Էլի՞ էնա պընատեն պե՞, իմ ծեռքյեր կապա՞, խենքյ ջըորենքյ, խեմ՝ քանի մ' ա իմ ուժ:

Էլավ, էպեր, կայիմ էտոր ծեռքյեր, թևեր կապեց:

Ասաց. — Փերկի հետևուն, տըրան հետևուն, էկե՞ք վիզ կըտրե՞ցյ, ես թևեր կապեր եմ:

Մարքն էլ ծեռքյեր, թևեր ետու հիրար, փոկ կըտըրտեց, ըգ-խանչալ քաշեց, վազավ տըռան ետև՝ մարք չըկա, վազավ փերկի իտև՝ մարք չըկա:

Եկավ խընչ կնիկ, ասաց. — Տիւ ընչի⁷ ենձան ասեցիր:

Ասաց. — Ես քիւ ուժ ջըրբեցի, խենք՝ քանի⁸ մ' եր քիւ ուժ:

Կնիկ ասաց. — Վոլլա, մարք, իմ խելքը չըկտրի՝ թու պան քյե զավքա, քիւ ուժ շատ ա:

Ասաց. — Կնիկ, թե իմ ծիու պոշի մազեր կապեն իմ պիւրեր, ծի զավքա, թե չէ՝ ծըրյեր, պաներ ծի չըն զավքի:

Կնիկն էլ կելի, օտաց ու ծեռաց երկու պիւրեր կը կապա ծիու մազով:

Կասա. — Պակու միջիւ մարքեր, եկե՛ք, վիզ կըտրե՛ք:

Մարք զինք հիրար կը տա, մազ միս կը կըտրա, կը խասի ուսկող: Կը մընա պառկուկ ըն տեղ:

Կասա. — Կնիկ, տանձակ պեր, մազեր կըտրա:

Կասա. — Չէ՛, քիւ տեղ էտին ա, տը մընաս ամտըլա:

Պառավն էլ կը վազա տանիս, խող կը տա հերան: Միրե Արաբու լաճ տիւրին էլ տըրի, խեմ եփ պառավ խող տը տա հերան:

Տեսավ, օր պառավ դիման էտուր վըր տանըսին:

Են էլ էլավ, տաս խա ծիավոր առավ ու քըշեց, գյընաց:

Գացին ընտեղ, տեսան, օր մարքն ծեռքյեր-օտքեր կապիւկ, թալիւկ ընտեղ:

Ըզմարքն էլ պընեցին, տարա՛ն, թալեցին մըչ տան կըշտի պակերուն: Ու գացին տուն վեր, քյեֆ կէնեն:

Դինչ օր էտա մարքիւ լաճն ա, կառի գանդտիկ խաց, պան, կը տանի, կը տա խոր, ինչ օր ախչիկն ա, կերբա, թե ուր խեր ասա՝ ծի խաց պեր, յան ճիւր պեր, ըզխեր կը տա հառճն քարի:

Միրե Արաբու խոլամներ կը պընեն, Ըզմարք կը թալեն խոր վեր: Մարքն էլ կընգի խորի տակ, կը տեսնա, օր երկու մարք կան հինե, հիսնի կերպ են, լե՛ էնպես գյեշ, ինոնց քյիր, պերան կը նընանի գիտընկու:

Են մարքերն էլ կասեն. — Քյե ընչի⁹ էտպես թալիցին խոր, քիւ կարիյար ի՞նչ էր:

Են էլ կը պատմա ուր գյըլխու գալած:

Ետա մարթերն էլ կը խառցընեն. – Սենք աղե՞կ մարթ ենք,
թե՞ ավեր:

Են էլ ուր խոր պատվեր կը նգի միտ:

Կասա. – Վոլլա, ախպե՞ր, տիւ աղեկ մարթ եք:

Կը տառնան, կասեն. – Սենք գյե՞շ ենք, թը՝ խորոտ, մե
բամաշա՞ երա:

Տըղեն կասա. – Ես ծեր պես խորոտ մարթ չըմ տեսեր, տիւք
շատ խորոտ եք:

Ենոնքյն էլ կասեն. – Ամլե մարթ թալած են եսա խոր վեր,
մարթ մե չըր ասեր՝ տիւ խորոտ եք, ո՞ն օր գյեր, կասեր տիւ գյեշ
եք: Մենք էլ գէնոնքյ կը ճամխենք մուր աշխար:

Կասեն ու կը տառնան երկու խորոտիկ ջրհել:

Կէլնեն, ետա մարթիւ օտքեր, ծեռքյեր կարծըրեն: Մարթուն
էլ նուռզմ կը տան: Մարթն էլ թե անոքցեր ա, կուզա, օր նուր կոտ-
րա, ուտա:

Կասա. – Ախպե՞ր, ետի ուտելու չի, ետոր խատեր հըմեն մեկ
միլոն մ' օսկի կը պղոնա, անգյին են:

Ըզմարթ կը խանեն տիւս խորեն:

Մարթն էլ կէլնի, կը գա, տեսի, օր Արաբու լաճ ենոր տունը
վեր քյեֆ-ուրախուրեն կէնեն:

Ետա մարթ օր խորեն ելավ, Արաբու լաճ փանջարից կը
տեսի:

Չուր են գա, Արաբու լաճ ուր խոլամքյերով կը փախի:

Մարթ կը գանա, մե խինգ-վեց խոլամ կը սպանա, մեկէլոնքյ
կը փախի:

Կը գա տուն, կը տեսնա, օր կնիկ ու պառավ գի տուն վեր:

Դախու էլ չըն կանա զոհւցե: Են էլ կը պերա, ըզպառավն էլ,
ըզկնիկն էլ կը կապա սուն վեր:

Ախչիկն էլ կը գա մոտ, կասա. – Տիւ ի՞նչըլս պըռծար, էկար
խորեն, տիւ ընչի՞ էկար, իմ խորոտ խեր փախավ, գյընաց:

Կասա. – Ախչիկ, քո խեր վո՞ն էր:

Կասա. – Իմ խեր Միրե Արաբու լաճն էր:

Են էլ ախչըկե փոր կը թափա, կը թալա դեն:

Տառնա ենոր երկու ծին, մեկ ծին իրեք օր կը թոնի անոթի,
են մեկն էլ իրեք օր կը թոնի ծարավ:

Ծիանքը կը խանա տիւո, ըգպառավ կը կապա օտք մ'են
ծիու պոչ, օտք մ'են ծիու պոչ:

Ծարավ ծիու հառեճ կը տա հայսպիւր, անորի ծիու հառեճ
կը տա առվլուտի արտ, փետ մ'ենոր կը զանա, մեկ էնոր, օտքմ կեյա
խըտ էն ծիուն, ոտքմ մեկելին, ըգպառավ կը տապկեն:

Տառնա գան տուն, խընճ կնիկ:

Կասա. – Կնիկ, տիւ ի՞նչ հապիվ ծի եմալ երիր, իմ կարիյար
ի՞նչ էր:

Կնիկ կասա. – Ես չերի, տիւ երիր:

Կասա. – Ես ի՞նչ էրի:

Կասա. – Ապա պառավ էկավ, ես չըր բողի՝ գյեր տուն, տիւ
էկար, պերի ներս, իմ խելք գյողցավ, ծի ճամիսն էխան:

– Եսի քիւ խոսքն ա:

Մարթու սիոտն էլ կընգից ընկոտրի:

Կասա. – Դե՛, էլի՛, էլի՛ ծիանքը խեծինք, քյե առիմ երթամ,
ախըր եղելուն եղեր ա:

Տըղեն էլ կասա. – Վոլլա՛, դադի՛, տիւ էտա կնիկ բողիր էկավ
խընդ մե, ես քիւ խետ չեկա:

Կասա. – Դե՛ր, որդի՛, հե՛ր:

Կասա. – Ապա էնիկ քիւ ծեռքյեր կապեց, քյե երալ խոր վեր,
Արաբու լաճն էլ կառեր, կը պառկեր, տիւ տը սպանես ու չըպերես
խընդ մե:

Կէլի, կնիկն էլ կը սպանա, կառի ըգտըղեն, կերթա տուն:

Խերն էլ կը տեսնա, օր ուր լաճն էկավ, մե չորս-խինգ
տարեկան երեխն մ'էլ խետ:

Կասա. – Տիւ դժ՛ր նր, դժ՛ր չեր:

Պատմեց էնոր գյըլիսի գալած:

Էտա նըռան խատերն էլ կը տանի քաղաքյ, կը ծախա, մեկ
խատին մեկ միլոն օսկի կը տան:

Կը պերա, թանկագին կոնխըներ կը տա շինել:

Մեկ ժամանակըմ կը մընա, էտոր խեր կը մեռի:

Էտոր ճիչ տըղի միտ կընգի խայիվորու խրատ:

Կէլի, ախպոր կասա. – Ախպե՛ր, էլի՛, մեր մալի կես բըլա-
վենք վեր աղքյըտներուն:

Պըստիկ ախպոր կասա. – Էտա խորխութ իմ սըռտի մեջն էլ
կեր:

Ետոնքյն էլ կելօնօն, մե մեկ խուռջի մ' օսկի կը թալին
թևերուց, տանին, օր բըլավեն աղքյըտներուն:

Մեկ թաղ վեր կերպա, մեկ էլ կերպա էնա մեկէլ թաղ՝ ջհկ-ջհկ:

Ինչ օր էն ճիշ ախապերն ա, ջամբազներ կը գան հառեմ:

Կասեն. – Ետի ի՞նչ փարա ա՝ կը ցըրվես:

Կասա. – Իմ խեր մեռեր ա, կը ցըրվենք աղքյըտներու
վերեն:

Կասեն. – Է՛, ջանըմ, ի՞նչ եօդիւտ, քիւ խեր էլ չըսաղնար,
աղքյըտներն էլ ծեր փարով չըն կըշտանար:

- Ապա ի՞նչըխ էնեմ:

- Ա՛ռ, արի՛ երթանք կազինոկ, ուտենքյ, խմենքյ, մեր քյեֆ
էնենքյ, հիրիկուն էլի գյենա՛ տուն:

Տըղեն կը համոզեն, կառեն, կերթան քյեֆ էնելու տեղրանքյ,
կը խապեն, փարեն մոտեն կառեն, կը խանեն, կը ճամխեն տուն:

Էն ի՞նչ պըստիկն ա, կը տանի, ուր փարեն կը ցըրվա
աղքյըտներուն, կը տառնա, գան տուն:

Խըլիսուն կելին, գինան մե մեկ խուռջի՞մ կը լըցեն:

Պըստիկ ախապեր կասա. – Էնա երկու թաղ ցըրվեր ենքյ, դիր
երթանքյ էնա երկու թաղեր:

Էն ի՞նչ ճիշ ախապերն ա, գինան ջամբազներ կը խապեն,
կառեն, կերթան: Պըստիկ ախապեր կը տանի մեկէլ թաղն էլ կը
ցըրվա: Չուր հիրիկուն մեկ խալիվորըմ կը գան հառեմ:

Կասա. – Ետի ի՞նչ ա՝ կը ցըրվեր:

Կասա. - Մեր խեր մեռեր ա, փարա կը ցըրվենք աղքյըտին:

Կասա. – Ապա հե՞ր մեր թաղ չըքյ ցըրվեր:

Կասա. – Իմ ճիշ ախապեր ճամխեր եմ, էկեր, ծեր թաղ կը ցըր-
վա, քյե չըտվե՞ր ա:

– Զէ՛, վոլլա՛, քիւ ախապեր էսա երկու օր ա՝ փարեն կառնի,
կիյա խընդ ջամբազներուն կուտա, կը խմա, փարա չըցըրվեր:

Տըղեն կելին, կերթա կազինոկ կաչկա, օր ախապեր գի էն
տեղ, քյեֆ կենա ջամբազներու խետ:

Ախապոր խետ կը կովի, կասա. – Յե՞ր ամտըլան կենես:

Ախապեր կասա. – Քյե ի՞նչ, ես կենեմ կենեմ:

Էն ու ախապեր կը պաժվին:

Ինչ օր ճհշ ախապոր մալն ա, կիյա կուրիսե, կաղթյուտանա,
ի՞նչըլս օր փետ եզար գհմշուն, գհմեշ տառացավ հիսան, փախավ,
կուրիսավ, ետոր հարստութեն էլ փճավ, կուրուսավ:

Ետա խալիվորն էլ հիրիկուն գյըննաց պըստիկ ախապոր
մըսաֆըր:

Տըղեն էջավ, կատըր պըռնեց, ջիւլ խագիւց, սոլ ետուր:

Ասաց. – Տըղա՛, էնա ի՞նչ երեխա ա քիւ տուն:

Ասաց. – Իմ լաճն ա:

Ասաց. – Ապա մեր չունի՞:

Պատմեց ուր գյըլխուր գալած:

Ասաց. – Տու չըս տիրի՞ն, ես էլնիմ քյե խոր տեղ, երթամ, քյե
կնիկ մ'ուզեմ:

Ասաց. – Քանի տիւ սադ ես, քյե խոր տեղ տիրիմ:

Խալիվորն էլ ասաց. – Ես կերթամ, ախչիկըմ կը տեսնիմ, քյե
կը ճամխիմ, տիւ էլ գյըննաց, թե ախչըկեն խավնար՝ պերեմ, թե
չըխավնար՝ կիյամ մեկ էլ կուզեմ:

Խալիվոր գյըննաց, ժամու տիւ կանավ, կը տեսնա, օր հը-
մեն էկան, գացին ժամ, հըմենի հետև մեկ պառավըմ, մեկ ախչիկ
մ'էկան, էնոնք էլ գացին ժամ:

Խալիվոր կանավ էնտեղ, չում ժամ էջավ: Ընգավ պառվու,
ախչըկեն հետև, գյըննաց պառվու տուն:

Պառվուն ասաց. – Քիւ ախչիկ չը՞ս իտար իմ լաճուն:

Պառավ ասաց. – Օր իմ փեսն իմ սըռտով եղի, կը տամ,
հե՞ր չըմ իտար:

Ասաց. – Կերթամ, իմ տըղեն ճամխեմ գա, թե խավնար՝
տուր, չըխավնար՝ մի տար:

Տառնա կը գա, տըղին կասա. – Ես ախչիկըմ տեսա, էլի՛ գյը-
նա՛, կաներ ժամտան տիւ, հըմեն կը գան ժամ, նոր էն ու էնու մեր
հըմենի էտև կը գան:

Տըղեն կերթա՛, ժամու տիւ կը կանի, տենա, օր ժողովուրտ
հըմեն էկան ժամ: Էնոնց հետև ախչիկ մ' ու պառավ մ' էկան:

Տըղեն տեսնելուն պես սիօտ վեր ախչըկեն կավիրի:

Կընգի հետևներ, կերթա տուն: Պառավն էլ ըգտղեն կը տիս-
նի, ախչըկեն սիօտ ու պառվուն էլ տըղի վերեն կավիրի, հիրարու
կը խավնեն, մատնըկներ կը փոխեն: Տըղեն կելնի, կը գա տուն:

Խալիվոր կասա. – Խավնա՞ր ախչըկեն, թե՞ չըխավնար:

Կասա. – Վոլլա՛, խավնա, շատ շնորհակալ եմ քյենե:

Պապիկն էլ կերա, կը պերա, կը փըսակա: Վեց օր, վեց գյիշեր խաղ ու խաղտուն կենեն: Ենոնքյն էլ խասան ուրենց մըրազին: Պապիկ կը թոնի, կը կուրիսա ենոնց հառճըվեն, խրիշտակ ա:

